ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ 24-25.10.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՌԱԿԱ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ ԴՐՎԱԾ ՀԱՐՑԻ

Օրակարգ՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2022 թվականի պահպանման ծախսերի նախահաշվում փոփոխություններ կատարելուն:

Առաջարկում ենք քննարկել գնումների անվանացանկում կատարվող փոփոխությունները որպես ծախսերի նախահաշվի փոփոխություն դիտարկելու և կառավարման խորհրդի քննարկմանը ներկայացնելու նպատակահարմարությունը:

Այս կապակցությամբ հայտնում ենք, որ «Տեսչական մարմինների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 7-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը քննարկում է տեսչական մարմնի տարեկան պահպանման ծախսերի նախահաշիվը (տնտեսագիտական դասակարգման հոդվածների մակարդակով) և հավանություն է տալիս դրան, իսկ 18-րդ հոդված 6-րդ մասի համաձայն՝ պետական բյուջեում առանձին տողով արտացոլված տեսչական մարմնի ֆինանսավորման մեջ փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել միայն Խորհրդի համաձայնությամբ:

Օրակարգում քննարկման ներկայացված հարցը (գնումների անվանացանկի փոփոխությունը) չի ենթադրում ոչ Տեսչական մարմնի ծախսերի նախահաշվի, և ոչ էլ ֆինանսավորման փոփոխություն: Հարցը ներկայացվել է Խորհրդի հաստատմանը՝ հիմք ընդունելով Կառավարման խորհրդի 01.10.19թ. N 13 որոշումը, ի նկատի ունենալով, որ եթե գնման գինը գերազանցում է 2.0 մլն դրամը, ապա այն պետք է ներկայացվի Կառավարման խորհրդի հաստատմանը: Հաշվի առնելով, որ գնումների ընթացակարգերը սահմանված են համապատասխան իրավական ակտերով, առաջարկում ենք քննարկել Կառավարման խորհրդի 01.10.19թ. N 13 որոշումը ուժը կորցրած ճանաչելու հարցը, մասնավորապես հաշվի առնելով, որ օրենքը նման լիազորություն չի վերապահում կառավարման խորհրդին:

Կառավարման խորհրդի N 13 որոշման մեջ որպես լիազորող նորմ նշված է Օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 1.1-րդ կետը, որի համաձայն՝ Տեսչական մարմնի կառավարման խորհուրդը հավանություն է տալիս տեսչական մարմնի կողմից ներկայացվող նորմատիվ իրավական ակտերի նախագծերին:

Սույն դիտարկումները հանդիսանում է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 24-25.10.2022թ. հեռակա (էլեկտրոնային) քվեարկությամբ անցկացված նիստի 25.10.2022թ. արձանագրության անբաժանելի մասը: